

Կ-1007-13.07.2021-ՏՀ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19.6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1. Եվրասիական տնտեսական

միության շրջանակներում արտաքին առևտրի ոլորտում սահմանափակումների ենթակա ապրանքներ երրորդ երկրներից ներմուծելու և (կամ) երրորդ երկրներ արտահանելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր (կամ դրանց կրկնօրինակներ) տրամադրելու համար

բազային տուրքի չափով, եթե սույն օրենքով այլ դրույքաչափ նախատեսված չէ

2. Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2523 ծածկագրին դասվող ցեմենտի (բացառությամբ 2523210000, 2523100000 ապրանքային դիրքերին դասվող ծածկագրերի) «Բացթողնում` ներքին սպառման համար», «Վերամշակում` մաքսային տարածքում» և «Վերամշակում` ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր մինչև հարյուր տոննայի ներմուծման լիցենզիա տրամադրելու համար

բազային տուրքի 1400-ապատիկի չափով

3. ԱՏԳ ԱԱ 252310000 ծածկագրին դասվող ցեմենտի «Բացթողնում` ներքին սպառման համար», «Վերամշակում` մաքսային տարածքում» և «Վերամշակում` ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր մինչև հարյուր տոննայի ներմուծման լիցենզիա տրամադրելու համար

բազային տուրքի 200-ապատիկի չափով

4. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2603000000 ծածկագրին դասվող պղնձի խտահանք արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների (մինչև հարյուր կիլոգրամ արտահանելու դեպքում գործում է սույն հոդվածի առաջին մասում սահմանված դրույքաչափը)

բազային տուրքի
160-ապատիկի չափով

5.«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2613 ծածկագրին դասվող մոլիբդենի խտահանքեր արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների (մինչև հարյուր կիլոգրամ արտահանելու դեպքում գործում է սույն հոդվածի առաջին մասում սահմանված դրույքաչափը)

բազային տուրքի
800-ապատիկի չափով

6.«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7202700000, 8102 ծածկագրին դասվող մոլիբդենի (բացառությամբ 810297000) արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների (մինչև հարյուր կիլոգրամ արտահանելու դեպքում գործում է սույն հոդվածի առաջին մասում սահմանված դրույքաչափը)

բազային տուրքի
1000-ապատիկի չափով

Հոդված 2.

Օրենքի 38-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«Սույն օրենքի 19.6-րդ հոդվածի 2-6-րդ մասերով նախատեսված պետական տուրքը վերադարձման ենթակա չէ:»:

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 3. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 30-րդ օրվանից:

2. Սույն օրենքը տարածվում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո լիցենզիա (հավաստագիր, թույլտվություն) ստանալու համար ներկայացված հայտերի վրա:

Կ-1007-13.07.2021-ՏՀ-011/01

Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Լրամշակված տարբերակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19.6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1. Եվրասիական տնտեսական

միության շրջանակներում արտաքին առևտրի ոլորտում սահմանափակումների ենթակա ապրանքներ երրորդ երկրներից ներմուծելու և (կամ) երրորդ երկրներ արտահանելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր (կամ դրանց կրկնօրինակներ) տրամադրելու համար

բազային տուրքի չափով, եթե սույն օրենքով այլ դրույքաչափ նախատեսված չէ

2. Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2523 ծածկագրին դասվող ցեմենտի (բացառությամբ 2523210000, 2523100000 ապրանքային դիրքերին դասվող ծածկագրերի) «Բացթողնում` ներքին սպառման համար», «Վերամշակում` մաքսային տարածքում» և «Վերամշակում` ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր մինչև հարյուր տոննայի ներմուծման լիցենզիա տրամադրելու համար

բազային տուրքի 1400-ապատիկի չափով

3. ԱՏԳ ԱԱ 252310000 ծածկագրին դասվող ցեմենտի «Բացթողնում` ներքին սպառման համար», «Վերամշակում` մաքսային տարածքում» և «Վերամշակում` ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր մինչև հարյուր տոննայի ներմուծման լիցենզիա տրամադրելու համար

բազային տուրքի 200-ապատիկի չափով

4. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2603000000 ծածկագրին դասվող պղնձի խտահանք արտահանելու յուրաքանչյուր մեկ տոննայի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ [«Է-Է միջազգային պայմանագրով նախատեսված»](#) երկրների (մինչև հարյուր կիլոգրամ արտահանելու դեպքում գործում է սույն հոդվածի առաջին մասում սահմանված դրույթաչափը)

բազային տուրքի
160-ապատիկի չափով

5.«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2613 ծածկագրին դասվող մոլիբդենի խտահանքեր արտահանելու [յուրաքանչյուր մեկ տոննայի](#) լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ [«Է-Է միջազգային պայմանագրով նախատեսված»](#) երկրների (մինչև հարյուր կիլոգրամ արտահանելու դեպքում գործում է սույն հոդվածի առաջին մասում սահմանված դրույթաչափը)

բազային տուրքի
800-ապատիկի չափով

6.«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7202700000, 8102 ծածկագրին դասվող մոլիբդենի (բացառությամբ 810297000) արտահանելու [յուրաքանչյուր մեկ տոննայի](#) լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ [«Է-Է միջազգային պայմանագրով նախատեսված»](#) երկրների (մինչև հարյուր կիլոգրամ արտահանելու դեպքում գործում է սույն հոդվածի առաջին մասում սահմանված դրույթաչափը)

բազային տուրքի
1000-ապատիկի չափով

Հոդված 2.

Օրենքի 38-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«Սույն օրենքի 19.6-րդ հոդվածի 2-4-~~6~~-րդ մասերով նախատեսված պետական տուրքը վերադարձման ենթակա չէ:»:

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 3. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 30-րդ օրվանից:

2. Սույն օրենքը տարածվում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո լիցենզիա (հավաստագիր, թույլտվություն) ստանալու համար ներկայացված հայտերի վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
 ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1007-13.07.2021-ՏՀ-011/1)
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1.	2.	3.	4.	5.
1.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է օրենքի նախագծի 1-ին հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերից հանել «և և միջազգային պայմանագրով նախատեսված» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում	Առաջարկվում է օրենքի նախագծի 1-ին հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում «արտահանելու» բառից հետո ավելացնել «յուրաքանչյուր մեկ տոննայի» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է

		կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված			
3.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերության «2-4-րդ մասերով» բառերը փոխարինել «2-6-րդ մասերով» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է